ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ 1945–1949 ԹԹ.

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

1938 թ. Խորեն Ա կաթողիկոս Մուրադբեկյանցի մահից ի վեր Ամենայն հայոց կաթողիկոսի աթոռը թափուր էր, և խորհրդային կառավարությունը չէր շտապում նոր կաթողիկոսի ընտրության հարցում: 1945 թ. սկզբներին նկատվում են որոշ տեղաշարժեր: 1945 թ. ապրիլի 19-ին Խորհրդային Միության ղեկավար Ի. Ստալինն ընդունում է 1941 թ. Ազգային-եկեղեցական ժողովի կողմից Մայր Աթոռի ազգընտիր տեղապահ ընտրված Գևորգ արք. Չեորեքչյանին[1]: Այս հանդիպումը նշանակալից է նրանով, որ Չեորեքչյանը թույլտվություն ստացավ անցկացնելու կաթողիկոսական ընտրություններ: Հնարավոր է, որ Ստալինը գիտակցում էր, որ դա հարմար առիթ է Երևանում հայկական բոլոր գաղթօջախներից պատվիրակություններ հավաքելու համար, որոնք կպաշտպանեին Մոսկվային՝ Թուրքիային ներկայացրած հողային պահանջների հարցում: Եվ Կրեմլն իր հաշվարկներում չսխալվեց. հայ ժողովրդի բազմադարյան պատմության հիմնական ակունքներից մեկը՝ Հայ առաքելական եկեղեցին, որը պետականության չգոյության պայմաններում միշտ էլ ստանձնել է քաղաքական իշխանության գործառնություններ, այս անգամ էլ հողերի վերադարձման հարցում ձեռնարկեց անհրաժեշտ սպասված քայլերը:

Կաթողիկոսի ընտրությունը կայացել է 1945 թ. հունիսին: Հունիսի 16-ին Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի դահլիճում բացվել է Ազգային-եկեղեցական ժողովը, որին մասնակցում էին աշխարհի չորս ծագերից Հայաստան ժամանած 113 եկեղեցական ու աշխարհիկ պատգամավորներ[2]: Հունիսի 22-ին կաթողիկոս է ընտրվել Գևորգ արք. Չեորեքչյանը, հունիսի 24-ին կատարվել է կաթողիկոսի օծումը, իսկ 26-ի նիստի ընթացքում ներկաները Ի. Ստալինին ուղղված խնդրագիր են պատրաստել, որտեղ հիմնականում անդրադառնում էին հայերի դարավոր երազանքի իրականացմանը, այն է՝ Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հողերի միացումը Խորհրդային Հայաստանին: Ավելին, սփյուռքահայերը ցանկանում էին ներգաղթել հայրենիք:

Նիստի արձանագրության մեջ նշված է, որ ՀԽՍՀ-ի գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի տնօրեն պրոֆ. Արարատ Ղարիբյանը Ազգային-եկեղեցական ժողովի աշխատանքների ավարտին կարդացել է այդ փաստաթուղթը: Նամակում ասվում էր.

«Ժողովրդական կոմիսարների Սովետի նախագահ Իոսիֆ Ստալինին.

---

[1] *«Էջմիածին», 1945, մարտ-ապրիլ, էջ 3, «Սովետական Հայաստան», 20. IV. 1945:*

[2] *«Սովետական Հայաստան», 17. IV. 1945:*

Հայկական Եկեղեցու Համազգային ժողովի պատգամավորներս, ավարտելով մեր աշխատանքները, հաճույք և պատիվ ունենք հայտնելու ձեզ մեր սրտագին երախտագիտությունը: Սովետական Միության՝ մեզ տված դրություններով մենք հնարավորություն ունեցանք կատարյալ համերաշխությամբ և միաձայնությամբ ընտրելու Ամենայն Հայոց Պատրիարք Կաթողիկոս Տեր Ամեն. Գ. Չէորեքչյան:... Մենք մեծ հույս ունենք, որ Սովետական Միության պետական և քաղաքագիտության իմաստությունը կգտնի նաև միջոց ու ճանապարհ՝ վերացնելու այն անարդարությունը, որին ենթարկվեց մեր ժողովուրդը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին: …Մե՛ծ Ստալին, մենք ևս ձայնակցելով Ամերիկահայ Ազգային խորհրդի դեկլարացիային՝ ուղղված Սան Ֆրանցիսկոյի պատգամավորներուն (խոսքը Սան Ֆրանցիսկոյում կայացած ՄԱԿ-ի վեհաժողովի մասին է – Ք. Ս.) և մամուլին, մեկուկես միլիոն դժբախտ և հայրենազուրկ հայերու անունով կդիմենք ձեզ նույնպես իրագործել հայ ժողովրդի ազգային ամբողջացումը՝ կցելով Թրքահայաստանի հողերը Սովետական Հայաստանի երկրամասին և կարգադրելով աստանդական հայերու վերադարձը իրենց մայր երկիրը»: Նամակի տակ ստորագրել էին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Ա, Երուսաղեմի Հայոց պատրիարք Կյուրեղ Բ, ինչպես նաև Հունաստանի, Արևմտյան Եվրոպայի, Կալիֆոռնիայի, Եգիպտոսի, Հյուսիսային Ամերիկայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Ադրբեջանի և թեմական այլ առաջնորդներն ու աշխարհիկ պատգամավորները, որոնք ներկայացնում էին ԱՄՆ-ի, Իրանի, Վրաստանի, Հունաստանի, Լիբանանի, Սիրիայի, Հյուսիսային Կովկասի, Ռումինիայի, Ղարաբաղի, Պաղեստինի, Բուլղարիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Եգիպտոսի, Նոր Նախիջևանի, Ադրբեջանի, Թուրքմենստանի և Հայաստանի հայությանը[3]*:*

Ազգային-եկեղեցական ժողովի այս նամակը բացահայտ ապացույց էր, որ համայն հայությունը Թուրքիային ներկայացված հողային պահանջատիրության հարցում միասնական է: Սփյուռքահայերն արդեն ստեղծել էին ազգային խորհուրդներ և առանձին-առանձին իրենց պայքարն էին տանում: Կաթողիկոսի ընտրությունը սկիզբ դարձավ համատեղ շարժման համար: Ս. Էջմիածնից վերադառնալուն պես պաղեստինահայության պատգամավորը Երուսաղեմում հրապարակային մի հայտարարություն է արել, որը հետագայում սփյուռքահայ մամուլում ներշնչանքի թեմա դարձավ: Նշելով, որ աշխարհիկ պատգամավորների մի մասը պատիվ է ունեցել հանդիպելու Խորհրդային Հայաստանի արտգործնախարար Հ. Կարապետյանին և տեղեկացրել, որ արտաքին գերատեսչության ղեկավարը ամրապնդել է պատգամավորների հույսերը և վստահեցրել, «որ շուտով կարելի պիտի ըլլայ Արարատը դիտել երկու կողմեն…»[4]*: Անշուշտ, Հ. Կարապետյանն այս հայտարարությունն արել է Մոսկվայի համաձայնությամբ, քանի որ առանց Ստալինի իմացության ոչ ոք չէր համարձակվի նման խոստումներ շռայլել: Ակնհայտ է, որ Երևանի ղեկավարությունն այս կերպ աշխատանք էր տանում սփյուռքահայության շրջանում և փորձում էր այս հարցում ստանալ նրանց աջակցությունը: Դա է վկայում նաև ԽՄԿԿ Կենտկոմի օրգան «Պրավդա» օրաթերթում՝ Ազգային-եկեղե-*

---

[3] *«Լրաբեր» (Նյու-Յորք), 16. II. 1946:*

[4] *Յ. Զ ա ք ա ր յ ա ն. Կարս (պատմա-աշխարհագրական տեսություն), Երուսաղեմ, 1946, էջ 8:*

ցական ժողովի այս նամակի արձագանքը: Թերթը գրել է. «Արտասահմանի մեկուկես միլիոն հայութունը Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հայաստանի կառավարության միջոցով դիմում է հղել, որպեսզի իր ծննդավայր հայրենիքը հանդիսացող Վանը, Բիթլիսը և Կարինը կցվեն Խորհրդային Հայաստանին: Կասկած չկա, որ Խորհրդային Հայաստանի ժողովուրդն ու կառավարությունը չէին կարող այլ կեցվածք ընդունել արտասահմանյան եղբայրների հանդեպ, եթե ոչ նրանց առջև լայն բացել հայրենիքի դռները... Մեծ անարդարություն նույնիսկ Ռուսական Կովկասի մաս կազմող Սուրմալուի, Կարսի և Արդահանի նահանգները՝ թուրքերին տալը... Կովկասահայության իրավունքն է Սուրմալու, Կարս ու Արդահան, իսկ թրքահայության իրավունքն է Վան, Բիթլիս ու Կարին վիլայեթների պահանջելը»[5]:

Սակայն, այս անգամ ևս դժբախտաբար, ոգևորիչ խոսքերին չեն հաջորդել ծանրակշիռ գործերը: Մինչդեռ Խորհրդային Հայաստանից դուրս ապրող հայերի համար տեղի ունեցածը կարևոր իրադարձություն էր: Նրանց գնահատմամբ, վերջապես սկսվել է ողջ հայության միավորման գործընթացը, հուսալով, որ հայկական հողային այս պահանջատիրության հարցում ԽՍՀՄ-ին աջակից կլինի համաշխարհային հանրությունը, որը դատապարտում է Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի հետ կատարված ողբերգությունը:

Ս. Էջմիածնի համաժողովին հրավիրված Մեծ Բրիտանիայի Քենտերբերիի տաճարի վանահայր Հյուրեթ Ջոնսոնը հունիսի 29-ին Երևանից մեկնելուց առաջ խորհրդային և արտասահմանյան լրագրողներին տված մամուլի ասուլիսում ասել է. «Ես լիովին և ի սրտե համաձայն եմ, որ Թուրքիայի կողմից խլված մարզերը պետք է որքան հնարավոր է շուտ վերադարձվեն Հայաստանին: Ամերիկահայերի Ազգային խորհրդի դեկլարացիան, իմ կարծիքով, միանգամայն արդարացի է ու հիմնավորե[6]*: Ջոնսոնի հայտարարությունը Անկարայի համար անակնկալ էր. այն ընդունվել էր որպես անգլիական եկեղեցու պետ Քենտերբերիի արքեպիսկոպոսի կողմից արված հայտարարություն: Ավելին, Թուրքիայի նախագահ Ի. Ինյոնյուն Լոնդոնից բացատրություններ էր պահանջել: Իրավիճակը հարթվել է միայն այն ժամանակ, երբ Թուրքիայում բրիտանական դեսպանը՝ Սեր Մորիս Փիթերսոնը, լուսանկարներով և փաստերով ապացուցել է, որ Ջոնսոնը արքեպիսկոպոս չէ: Ավելի ուշ Լոնդոնը պաշտոնական հայտարարությամբ է հանդես եկել և վստահեցրել, թե անգլիական եկեղեցու հոգևորականների հայտարարությունները պաշտոնական ուժ չունեն*[7]*:*

Մինչդեռ Ջոնսոնը մեծ ընդունելություն է գտել Մոսկվայում: Հուլիսի 6-ին նա հանդիպել է Ստալինին, որին պատմել է Էջմիածնի եկեղեցական ժողովի մասին: Չի բացառվում, որ կողմերն անդրադարձել են նաև հայկական տարածքների հարցին[8]*: Տասը օր անց՝ հուլիսի 16-ին, Պոտսդամում Մոլոտով–Իդեն հանդիպմանը ԽՍՀՄ-ի արտաքին գերատեսչության ղեկավարն անգլիացի պաշտո-*

---

[5] Правда, 18. VIII. 1945.

[6] *«Սովետական Հայաստան», 26. VI. 1945:*

[7] *Ջ. Մ ս ը ր լ յ ա ն. Համաշխարհային երկրորդ պատերազմի վախճանը և հայերը.– «Հայկազյան հայագիտական հանդես», Պեյրութ, 1993, էջ 184:*

[8] *«Սովետական Հայաստան», 7. VII. 1945:*

նակցին հիշեցրել է, որ անգլիական կառավարությունը բազմիցս հանդես է եկել ի պաշտպանություն հայերի, իսկ բոլորովին վերջերս էլ հայերի պահանջը պաշտպանել է դոկտոր Հ. Ջոնսոնը[9]:

Հայկական տարածքներն իրենց իրական տիրոջը վերադարձնելու պահանջին ի պաշտպանություն հանդես են եկել եկեղեցական այլ կազմակերպություններ ևս: Այսպես, օրինակ, Ամերիկայի հայկական ավետարանական միությունը 1945 թ. սեպտեմբերին Պրովինդեսում (Ռոդ Այլենդ նահանգ) կայացած նիստում ուղերձով դիմել է Լոնդոնում ընթացող Մեծ տերությունների արտգործնախարարների հավաքին: Դիմումում ասվում է. «Մենք՝ Ամերիկայում հայկական ավետարանական միության հոգևորականներս, հավաքված հատուկ նիստում, խնդրում ենք Արտգործնախարարների խորհրդին հանուն արդարության և մարդասիրության դիտարկել հայ ժողովրդի դարավոր պահանջը, որը դարերի ընթացքում տառապել է թուրքական լծի տակ: Հայ ժողովուրդը, որը ժամանակին եղել է հպարտ ու մեծ ազգ և հոյակապ ներդրում է արել քաղաքակրթության և քրիստոնեության գործում, վերջին 50 տարիների ընթացքում բնաջնջվում է թուրքերի կողմից իրականացվող մասսայական սպանությունների, աքսորների, խտրականությունների և գույքի անօրինական բռնագրավման միջոցներով: Կենդանի մնացած մեր ժողովրդի մի մասը առաջին համաշխարհային պատերազմից հետո թուրքական քաղաքականության հետևանքով ցրված է աշխարհի բոլոր ծայրերում: Մենք խնդրում ենք արդարություն ցույց տալ այս հայերին, ինչպես հնարավոր անելով նրանց վերադարձը Թուրքիայում գտնվող իրենց վաղնջական հողերը, այնպես էլ վերադարձնել այդ հողերն ազատության և անվտանգության մեջ ապրող Խորհրդային Հայաստանին»[10]: Փաստաթուղթը ստորագրել էին միության քարտուղար Գեորգեզյանը և նիստը նախագահող Էռնազյանը:

Միաժամանակ այդ բոլոր դիմում-նամակներում տարածքային պահանջատիրության խնդրի հետ համատեղ քննարկվել է նաև հայերի Խորհրդային Հայաստան ներգաղթը կազմակերպելու հարցը: Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն դա դիտում էին որպես «խորհրդային ծրագիր»՝ շեշտելով, թե այս կերպ ԽՍՀՄ-ը ցանկանում է իրականացնել իր զավթողական ծրագրերը[11]: Իհարկե, ներգաղթի վերաբերյալ ԽՍՀՄ-ի կառավարության ընդունած որոշումը նախևառաջ քաղաքական քայլ էր՝ համաշխարհային հանրության շրջանում արդարացնելու Անկարային ներկայացրած պահանջները, քանի որ միջազգային ֆորմալ և ոչ ֆորմալ բոլոր հանդիպումներում խորհրդային կողմը պատճառաբանում էր, որ դա անհրաժեշտ է ոչ թե Խորհրդային Միությանը, այլ Խորհրդային Հայաստանին, որի տարածքը փոքր է և այդ պատճառով չի կարող բավարարել սփյուռքահայերի՝ հայրենիք վերադառնալու ցանկությունը:

---

[9] Р. К о р х м а з я н. Территориальные проблемы советско-турецких отношений на Берлинской (Потсдамской) конференции руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании. – Страны и народы Ближнего и Среднего Востока. Ереван, 1996, № 16, с. 23.

[10] *Հ. Վ р թ ա ն է ս. Հայկական հարցը այսօր, Նյու Յորք, 1945, էջ 147:*

[11] *Գ. Լ ա զ յ ա ն. Հայաստան և Հայ Դատը, Կահիրե, 1946, էջ 333:*

Եվ չնայած ներգաղթ կազմակերպելու հարցը Մոսկվայում բարձրացվել էր դեռ 1945 թ. ապրիլին, սակայն խորհրդային կառավարությունը միայն 1945 թ. վերջին է տվել ներգաղթի մեկնարկը. նոյեմբերի 21-ին պաշտոնապես հայտարարել է կազմակերպել սփյուռքահայերի ներգաղթը դեպի Խորհրդային Հայաստան[12]: Հայտարարությունից մի քանի օր անց՝ նոյեմբերի 27-ին, Ամենայն հայոց Գևորգ Զ կաթողիկոսը հուշագրով դիմել է ԽՍՀՄ-ի ղեկավար Ի. Ստալինին, ԱՄՆ-ի նախագահ Հ. Տրումենին և Մեծ Բրիտանիայի վարչապետ Կ. Էտլիին՝ պահանջելով Թուրքիայի կողմից գրավված հայկական տարածքները վերադարձնել Խորհրդային Հայաստանին: Փաստաթղթում նշված է, թե Մեծ եղեռնից հետո «ի լրումն հայ ժողովուրդի գլխին եկած դժբախտությունների, թուրքեր 1920 թվին ուխտադրուժ կերպով հարձակվեցին ու խլեցին Հայաստանի կարևոր կենսական մասերը՝ Ղարսը, Արտահանը, Սուրմալուն: Սովետական նորածին Միությունը ազատեց հայկական պատմական հողերի մի փոքր մասը, որով փրկեց նա այնտեղ ապրող հայերին վերահաս բնաջնջումից: Այսպեսով ստեղծվեցավ Հայկական Սովետական Ռեսպուբլիկան (Հանրապետությունը)...»[13]: Ամենայն հայոց կաթողիկոսը նշում էր, թե հայ ժողովուրդը իր դառն փորձից գիտե, թե ներկա կամ հին Թուրքիայի միջև տարբերություն չկա, ու միակ ելքը Թուրքահայաստանի ազատագրումն ու կցումն է Խորհրդային Հայաստանին: Ուստի, «վերստին խնդրում ենք, որ Թուրքիայի հայկական վիլայեթները միացվին Սովետական Հայաստանին, որպեսզի հայությունը ամբողջանա՝ հավաքվելով հայրենի երկրում և ապահովության ու խաղաղության մեջ շարունակե իր ընդհատված քաղաքակրթության աշխատանքը և ի հայտ է բերե իր անուրանալի ստեղծագործական պոտենցիալը»[14]: Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացրածը ավելին էր, քան Կարս–Արդահանի պահանջը. արված ձևակերպումով նա պահանջում էր Սևրի դաշնագրով երաշխավորված հայկական հողերը:

Նոյեմբերի 29-ին Էջմիածնում հրավիրած մամուլի ասուլիսում Գևորգ Զ-ն խորհրդային կենտրոնական և հանրապետական թերթերի թղթակիցներին պարզաբանել է, թե ինչու է դիմել նման քայլի: Նա հայտարարել է. «Արտասահմանի հայության ճակատագրի մասին մեր հոգատարությունը և նրանցից ստացած բազմաթիվ նամակները ու հեռագրերը մեզ մղեցին դիմելու երեք տերությունների ղեկավարներին՝ Ստալինին, Տրումենին և Էտլիին՝ խնդրելով վերացնել բազմաչարչար հայ ժողովրդի վերաբերմամբ թույլ տրված պատմական մեծ անարդարությունը: Մեր դիմումով մենք խնդրում ենք Թուրքիայից վերցնել նրա կողմից բռնի կերպով զավթված և այժմ ամայի հողերը, վերադարձնել նրանց վաղեմի տերերին և այդ հողերը միացնել Սովետական Հայաստանին: Դա գաղթական հայերին հնարավորություն կտա մի ընտանիքի մեջ ապրելու իրենց այ-

---

[12] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ) ֆ. 326, ց. 1, գ. 74 (ՍՍՀՄ Ժողովրդական կոմիսարների Սովետի 1945 թ. նոյեմբերի 21-ի № 2947 որոշումը «Արտասահմանյան երկրերից հայերի ներգաղթի հետ կախված միջոցառումների մասին»), թ. 1:*

[13] *«Էջմիածին», 1945, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 8-10:*

[14] *Նույն տեղում:*

ռունակից եղբայրների հետ, աշխատելու և զարգացնելու իրենց ազգային կուլտուրան»[15]:

Ամենայն հայոց կաթողիկոսը չի բավարարվել միայն հայտարարություններով, նա հատուկ կոնդակով շեշտել է ներգաղթի կարևորությունը և դրա հետ կապված հրահանգներ տվել արտասահմանի թեմական առաջնորդներին: 1946 թ. հուլիսի 1-ին Եվրոպայում կաթողիկոսի պատվիրակ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմենյանին հասցեագրված հրովարտակում հանձնարարել է. «Մեր առաջարկն է շտապ կարգով տեղական պայմանների համաձայն՝ կազմակերպել նյութական աջակցության հարցը և գործի անցնել, եւ ձեր ձեռնարկների և նոցա ելքի մասին պարբերաբար իրազեկ անել մեզ ի գիտություն, ի միամտություն և հաջակցություն»[16]: Իսկ 1947 թ. ապրիլի 20-ին կաթողիկոսը հրապարակել է ընդարձակ մեկ այլ կոնդակ՝ «Հայ ժողովրդի արդար դատի և բռնադատված իրավունքների մասին» խորագրով:

Իսկ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանի՝ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ս. Կարապետյանին ուղղված 1947 թ. ապրիլի 14-ի գրությունից տեղեկանում ենք, որ Գևորգ Զ կաթողիկոսը նամակով դիմել է անգլիական եկեղեցու առաջնորդին: Փաստաթղթում ասվում է. «Նա՝ որպես անգլիական խորհրդարանի անդամ, ձայն բարձրացնի ի պաշտպանություն հայերի արդարացի պահանջի՝ հայկական հողերը Խորհրդային Հայաստանին միավորելու, որի մասին նա խոսել էր երեք մեծ տերությունների՝ ԽՍՀՄ, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի, ղեկավարներին հասցեագրված իր ուղերձում»[17]: Անգլիական եկեղեցու առաջնորդին նույն բովանդակությամբ հուշագրով դիմել է նաև Եվրոպայի թեմի առաջնորդ Արտավազդ արք. Սյուրմենյանը: Այդ կապակցությամբ Գևորգ Զ կաթողիկոսը գրել է. «Արտավազդ արքեպիսկոպոսը, այցելության ժամանակ, իր իրավունքների սահմանից դուրս գալով՝ թույլ է տվել իրեն գրավոր հուշագրով դիմել Քենթրբերիի արքեպիսկոպոսին և խնդրել, որ նա՝ Հայկական դատի առթիվ՝ «պատշաճ դիմումներ կատարի իրավասու նախարարներին»: Նրա այս քայլը բնականաբար կարժանանա նկատողության: Այս առթիվ մտադիր ենք նաև ընդհանուր շրջաբերականով զգուշացնել բոլոր թեմակալներին՝ օտար եկեղեցիների առաջնորդներին այցելելիս զգույշ լինել և դուրս չգալ իրենց իրավունքների սահմաններից»[18]:

Կաթողիկոսի նման արձագանքը վկայում է, որ նրա դիվանագիտական բոլոր քայլերը համաձայնեցված են եղել ԽՍՀՄ-ի ղեկավարությ ան հետ և նա գիտակցել է, որ ցանկացած չհամաձայնեցված քայլ կարող է ճակատագրական լինել հայ եկեղեցու համար: Բացի այդ, պահպանվել է 1949 թ. Ի. Վ. Ստալինին Գևորգ Զ-ի գրած հույժ գաղտնի նամակը, որտեղ կաթողիկոսը տեղեկացրել է իր ծրագրերի մասին: Նամակում ասվում է. «Սկսել ենք նյութեր հավաքել ու շուտով նաև կազմել հատուկ հուշագիր ՄԱԿ Գլխավոր համաժողովի Փարիզյան նստաշրջանին նեկայացնելու համար: Հուշագիրը կկազմվի ռուսերեն և հայերեն, կթարգմանվի ֆրանսերեն և

---

[15] *«Սովետական Հայաստան», 2. XII. 1945:*

[16] *«Հառաջ» (Փարիզ), 12. XI. 1946:*

[17] *ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 19, թ. 9*

[18] *Նույն տեղում, գ. 26, թ. 22:*

անգլերեն ու կտպագրվի նստաշրջանի նախօրեին, կառաքվի ոչ միայն Համաժողովի մասնակիցներին, այլև պարբերական մամուլին, հասարակական կազմակերպությունների, քաղաքական գործիչների, գրողների, եկեղեցիների և այլն: Հուշագիրը ծառայելու է Թուրքահայաստանի վիլայեթները Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու հայ ժողովրդի պահանջի պատմաքաղաքական և միջազգային իրավական հիմնավորմանը: Բոլոր ձեռնարկվող քայլերը անպայման կհամաձայնեցվեն ԽՍՀՄ կառավարության հետ ինչպես հուշագրի բովանդակության ու ձևի, նույնպես պահի ընտրության և Համագումարին ներկայացնելու կանոնակարգի առումով: Անհրաժեշտ է Ձեր համաձայնությունը, որպեսզի պահպանելով ձեռնարկվելիք քայլերի խորհրդապահությունը, այնուամենայնիվ սաստկացնենք ու աշխուժացնենք հայ և հայասեր կազմակերպությունների գործունեությունը խորհրդային իշխանությանը և հայ ժողովրդին ցանկալի ուղղությամբ»[19]: Այսինքն, կաթողիկոսը գիտակցել է, որ խորհրդային կառավարության հետ համագործակցելով է միայն հնարավոր ինչ-որ մի արդյունքի հասնել:

Այսպիսով՝ կարելի է համոզված ասել, որ հայկական տարածքների պահանջատիրության հարցում պաշտոնական Մոսկվային անհրաժեշտ էր հայոց եկեղեցու աջակցությունը: 1945 թ. թույլատրելով կաթողիկոսի ընտրությունները՝ Ի. Ստալինը, կարծես թե, դնում էր հայ եկեղեցու հետ համագործակցության հիմքը, ավելին, ամբողջ աշխարհի հայկական գաղթօջախներից Երևան ժամանած պատվիրակությունների միջոցով Թուրքիային ներկայացրած պահանջների հարցում փորձում էր ստանալ սփյուռքահայերի համաձայնությունը: Ազգային-եկեղեցական ժողովի՝ Ստալինին ուղղած նամակը համայն հայության երազանքի բացահայտ արտահայտությունն էր ինչպես տարածքային պահանջատիրության, այնպես էլ ներգաղթի հարցում: Ավելին՝ Գևորգ Զ-ի կոնդակներն ու դիմում-նամակներն էլ իրենց հերթին նոր էջ են բացել հայկական հողերի պահանջատիրության պայքարի տարեգրության մեջ և մեծապես նպաստել Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտոնում Գևորգ Զ Չորեքչյանին փոխարինած Վազգեն Ա Պալճյանին շարունակելու իր նախորդի կիսատ թողած գործը:

ВОПРОС О ТРЕБОВАНИИ ВОЗВРАТА АРМЯНСКИХ ТЕРРИТОРИЙ И АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ В 1945–1949 ГГ.

КРИСТИНЕ МЕЛКОНЯН

Р е з ю м е

В марте 1945 г. вслед за денонсацией Москвой советско-турецкого Договора о дружбе и нейтралитете, И. Сталин решил задействовать армянскую церковь по реализации Армянского вопроса.

[19] *ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 807, թ. 1-7:*

Учитывая, что с 1938 г. Армянская Апостольская церковь существует без своего главы, Москва дала согласие на избрание нового Католикоса Всех Армян. 22 июня 1945 г. большое национально-церковное собрание единогласно избрало Геворга Чорекчяна Католикосом Всех Армян, а 24 июня 1945 г. состоялось его освящение и восшествие на престол под именем Геворга VI. Новый Католикос четко воспринял все директивы Сталина по предстоящему включению армянской церкви в антитурецкую «территориальную» игру. В связи с чем следует отметить большую роль Геворга VI в возбуждении вопроса о возвращении Армении захваченных Турцией западноармянских территорий.

THE QUESTION ON THE REQUIREMENT OF RETURN OF THE ARMENIAN TERRITORIES AND THE ARMENIAN CHURCH IN 1945–1949

CHRISTINE MELKONYAN

S u m m a r y

In March 1945 after the denouncement of the Soviet-Turkish friendship and neutrality treaty by Moscow, I. Stalin decided to involve the Armenian church in realization of the Armenian question. Considering, that from 1938 the Armenian Apostolic church existed without its chapter, Moscow gave the consent for election of the new Catholicos of All Armenians. As a result, on June 22, 1945 the big national-church assembly unanimously elected Gevorg Chorekchyan the Catholicos of All Armenians, and his consecration and accession to the throne under the name of Gevorg VI on June 24, 1945 took place. The new Catholicos precisely apprehended Stalin's all instructions on forthcoming inclusion of the Armenian church in anti-Turkish “territorial” game. In this connection it is necessary to notice, that role of Gevorg VI in raising the question on returning Armenia West-Armenian territories grasped by Turkey is great.